ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիս 2023

IDAHOBIT 2023

«ՄԵՆՔ ՆՈՒՅՆՆ ԵՆՔ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ՓՈՂՔԱՍՏԵՐԻ ՇԱՐՔ----------2
ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ----------3
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ----------4
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԵՐԿՈՒ ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍ և ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ----------5
ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆՆԵՐԸ----------6
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ ԱՌԿԱ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2023Թ-Ի ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ----------7
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀՈՄՈՖՈԲԻԱՅԻ, ԲԻՖՈԲԻԱՅԻ ԵՎ ՏՐԱՆՍՖՈԲԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ----------8
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ԾՐԱԳՐԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՄԱՄՆԱԿՑԵԼ Է IDAHOT+ ՖՈՐՈՒՄԻՆ----------11
ԽՈՍԻՐ ՄԵՆՔ ՔԵԶ ԼՍՈՒՄ ԵՆՔ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ՖՈԼՈՎԱԿ----------12
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԿԱՐԵՎՈՐՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՇԱՎ-Ի ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐ----------13
ՏՐԱՆՍ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ----------14
ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ----------15
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՄՆԱԿՑԵԼ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ----------16

«ՄԵՆՔ ՆՈՒՅՆՆ ԵՆՔ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

G | M | F The German Marshall Fund of the United States
STRENGTHENING TRANSATLANTIC COOPERATION

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Սույն փողքասթերը պատրաստվել են «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:
Սույնի բովանդակությունը և արտահայտված տեսակետները պատկանում են «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը և կարող են չհամընկնել Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության տեսակետների հետ:

ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

URGENT ACTION FUND FOR WOMEN'S HUMAN RIGHTS

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ն Արագ Արձագանքման Կանանց ֆոնդի ֆինանսական առաջկցությամբ նախաձեռնում է արագ արձագանքման օգնության ծրագիր բռնության ենթարկված Տրանս անձանց համար: Ծրագիրը հատուկ նախատեսված է այն տրանս անձանց համար, ովքեր ֆիզիկական, սեռական և/կամ այլ բռնության են ենթարկվել սույն թվականի ապրիլի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում և իրենց նկատմամբ բռնության դեպքերի մասին ծանուցել են ոստիկանություն, և ներկայումս գործին ընթացք է տրվել:

Այս ծրագրի շրջանակում դիմորդներից պահանջվում է գրավոր դիմում ներկայացնել Իրավունքի Կողմ ՀԿ, որտեղ պարտադիր պետք է նշվի դիմորդի անունը, բռնության դեպքի(երի) ամսաթիվը, բռնության տեսակը, վայրը, մանրամասներ՝ արդյոք բռնությունը դրդված է եղել իրենց գենդերային ինքնությամբ, գենդերային արտահայտմամբ կամ սեռական կողմնորոշվածությամբ: Նաև պետք է տեղեկություններ ներառել դեպքի մասին ոստիկանություն ծանուցելուց հետո գործի ընթացքի վերաբերյալ: Դիմորդները պետք է կարողանան հիմնավորել ֆինանասական օգնության հրատապությունը և նշեն հնարավոր հետևանքները, որ կարող են լինել, եթե օգնությունը չտրամադրվի:

Իրավունքի Կողմ ՀԿ-ն ձևավորելու է հատուկ հանձնաժողով, որը պատասխանատու է յուրաքանչյուր դիմումի մանրակրկիտ ուսումնասիրության և կարիքների գնահատման համար: Հանձնաժողովի անդամների կողմից դիմումների ուսումնասիրությունից հետո աջակցության դիմած անձինք պատասխան կստանան տասնօրյա ժամկետում: Օգնության տրամադրելով՝ Իրավունքի Կողմ ՀԿ-ն փորձում է թեթևացնել այն մարտահրավերները, որոնց բռնության ենթարկված Տրանս անձինք բախվում են այս դժվարին փուլում:

Կապ մեզ հետ՝

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ

Հեռ.՝ (+374) 11 880770

Էլ. հասցե՝ rightsidengo@gmail.com

Աշխատանքային ժամեր՝ 12:00-19:00

Դու միայնակ չես

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Իրավունքի Կողմ իրավապաշտպան կազմակերպությունը մեկնարկել է «Ընտանեկան բռնության ԼԳԲՏՔԻ+ զոհերի իրավիճակը Հայաստանում» հետազոտական ծրագիրը՝ ուսումնասիրելու ու բարձրաձայնելու Հայաստանում Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերը: ԻԼԳԱ Եվրոպայի կողմից ֆինանսավորվող ծրագրի նպատակն է բացահայտել Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության ձևերն ու դրսևորումները, հաճախականությունը, ինչպես նաև բռնության կիրառման դրդապատճառները, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները: Հետազոտությունը նաև հավաքագրելու է վիճակագրական տվյալներ ոլորտում գործող հասարակական կազմակերպություններից և պետական մարմիններից, ինչպիսիք են Ոստիկանությունը, Դատախազությունը, Քննչական կոմիտեն, Հատուկ քննչական ծառայությունը, և վերլուծելու է գործող օրենսդրությունը՝ վեր հանելու առկա օրենսդրական ու ինստիտուցիոնալ բացերը, ուսումնասիրելու և հանդես գալու ոլորտի հետ առնչվող մարմիններին ուղղված առաջարկություններով:

Թեև Հայաստանը քայլեր է ձեռնարկել ընտանեկան բռնության դեմ պայքարելու համար՝ 2017թ-ին ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով այն քրեականացնելով, բայց Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ առկա խտրականության պատճառով համայնքի անդամները հաճախ չեն հայտնում ընտանեկան բռնության մասին: Բացի այդ, ինչպես փաստում են պետական մարմիններին ուղղված հարցումները, ատելության հիմքով հանցագործությունների դեմ իրավական պաշտպանության և դեպքերի գրանցման բացակայությունը հանգեցրել է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների բացակայության:

Հետազոտության շրջանակում ստանդարտացված հարցման և առցանց հարցաշարի միջոցով ուսումնասիրվելու է 300 դեպք: Դիտարկվելու են հարցված անձանց նկատմամբ ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական բռնության և անտեսման դեպքերը: Հարցմանը մասնակիցներին հնարավորություն է տրված մասնակցել հարցազրույցին հեռախոսով, առցանց կամ Իրավունքի Կողմ ՀԿ-ի գրասենյակում:

Ովքե՞ր կարող են մասնակցել հարցմանը.

Հետազոտությանը կարող են մասնակցել 16 և բարձր տարիքի Տրանս և ԼԳԲԻՔ անձինք: Իրավունքի Կողմ ՀԿ-ն ապահովելու է հարցվածների անանունությունն ու տվյալների անվտանգությունը և, հասանելի ռեսուրսների սահմաններում, իրավական և հոգեբանական աջակցություն է տրամադրելու ընտանեկան բռնության ենթարկված անձանց:

Հարցմանը մասնակցելու համար սեղմեք այստեղ:

Հետազոտությունը էական նշանակություն ունի Հայաստանում Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի տարածումը բացահայտելու և խնդրի լուծման ճանապարհին մարտահրավերներն ու խոչընդոտները վեր հանելու համար: Այն նաև նպատակ ունի արդյունքների հիման վրա առաջարկություններ տրամադրել ոլորտին առնչվող պետական մարմիններին և համագործակցել նրանց հետ:

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԵՐԿՈՒ ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍ և ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ն տրանս և ԼԳԲԻՔ համայնքին աջակցելու և հզորացնելու նպատակով հայտարարում է համայնքի ներկայացուցիչների համար երկու նոր դասընթացի մեկնարկի մասին: Ընդունելությունը Անգլերեն և Գրաֆիկ Դիզայնի դասընթացների համար է, որոնք նպատակ ունեն մասնակիցներին տրամադրել անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ նրանց մասնագիտական կյանքը բարելավելու համար:

Յուրաքանչյուր դասընթաց բաղկացած է լինելու շաբաթական երկու խմբային հանդիպումներից՝ յուրաքանչյուրը 1 ժամ տևողությամբ, որոնք տեղի կունենան Իրավունքի Կողմ ՀԿ-ի համայնքային անվտանգ տարածքում: Անգլերեն լեզվի դասընթացը կենտրոնանալու է գործնական լեզվական հմտությունների վրա՝ կարդալ, գրել և խոսել, մինչդեռ Գրաֆիկ դիզայնի դասընթացը մասնակիցներին կներկայացնի դիզայնի սկզբունքները, ծրագրերը և տեխնիկան: Դասընթացներն իրականացվում են Իրավունքի Կողմ ՀԿ-ի կամավորների կողմից և մեկնարկելու են սույն թվականի հունիսի 1-ից:

Դասընթացները բաց են բոլոր Տրանս և ԼԳԲԻՔ անհատների համար, նախապատվությունը կտրվի ավելի վաղ դիմողներին, քանի որ տեղերը սահմանափակ են: Մասնակցել ցանկացողները պետք է դիմեն Իրավունքի Կողմ ՀԿ-ին էլեկտրոնային փոստով կամ հեռախոսով:

ԳՐԱՖԻԿ ԴԻԶԱՅՆԻ ԴԱՆՍԸԹԱՑՆԵՐ

Adobe Photoshop

Adobe Ilustrator

ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆՆԵՐԸ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն 2023 թվականի ապրիլ ամսվա ընթացքում կազմակերպության ապահով տարածքում իրականացրել է հետևյալ 4 միջոցառումները

Ապրիլի 7-ին «Լռության օր» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 12 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Ապրիլի 18-ին «Տրանսգենդեր անձանց ՄԻԱՎ-ի դեմ թեստավորման օր» թեմայով համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 17 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Ապրիլի 26-ին «Լեսբի անձանց տեսանելիության օր» թեմայով համայնքային հանդիպմում-կինոդիտմանը մասնակցել է թվով 14 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Ապրիլի 28-ին «ԼԳԲՏԻՔ+ համայնքի անդամների նկատմամբ ընտանեկան բռնություն» թեմայով համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 12 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն ապրիլ ամսվա ընթացքում ընդունել է թվով 190 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ, որոնք օգտվել են կազմակերպության կողմից իրականացվող հոգեբանական, իրավաբանական, կրթական, տեղեկատվական և սոցիալական ծրագրերի շրջանակներում տրամադրվող ծառայություններից:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի իրավաբանական բաժնում առկա գործերի վերաբերյալ 2023թ-ի մարտ ամսվա

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ ԱՌԿԱ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2023Թ-Ի ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 4-ի դրությամբ՝ «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի կողմից ընդհանուր վարվում է թվով 22 գործ, որից 2-ը գտնվում են ՄԻԵԴ-ում, 7-ը՝ դատաքննության փուլում, 11-ը՝ նախաքննության փուլերում:

2023 թվականի ապրիլ ամսին «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի կողմից տրամադրվել է խորհրդատվություն թվով 21 շահառուի:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի փաստաբանների կողմից ապահովվել է կազմակերպությունում առկա գործերի ընթացիկ սպասարկումը, մասնավորապես՝ փաստաբանները մասնակցել են 7 դատական նիստի, թվով 7 գործով մասնացել են քննչական գործողությունների:

2023 թվականի ապրիլ ամսվա ընթացքում ստացվել է 6 նոր դիմում՝ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի

իրավաբանական բաժին

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

IDAHOBIT 2023

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀՈՄՈՖՈԲԻԱՅԻ, ԲԻՖՈԲԻԱՅԻ ԵՎ ՏՐԱՆՍՓՈԲԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ամբողջ աշխարհում մայիսի 17-ը նշվում է որպես հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր (IDAHOBIT): Այս օրվա նպատակն է բարձրացնել ԼԳԲՏԻՔ անձանց տեսանելիությունը և հասարակության իրազեկվածությունը ԼԳԲՏԻՔ անձանց խնդիրների և նրանց նկատմամբ ատելության հիմքով խտրականությունների ու հանցագործությունների, ինչպես նաև նախապաշարմունքների մասին, որոնք պայմանավորված են սեռական կողմնորոշվածությամբ, գենդերային ինքնությամբ և գենդերային ինքնարտահայտմամբ: Հոմոֆոբիան, բիֆոբիան և տրանսֆոբիան արտահայտվում են ԼԳԲՏԻՔ անձանց հանդեպ տագնապի, ատելության, զայրույթի, անհարմարհանքի և վախի զգացումով:

Որպես Հայաստանում և Հարավային Կովկասում առաջին և առաջատար Տրանս, ԼԳԲԻՔ և սեքս աշխատողների համայնքահեն կազմակերպություն՝ Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ն 2016թ.-ից ի վեր աշխատանքներ է իրականացնում՝ պաշտպանելով տրանս, ԼԳԲԻՔ և սեքս աշխատող անձանց իրավունքները: Մեզ համար այսօր առաջնային է նաև մարտահրավեր նետել խտրականությունն ու նախապաշարմունքները հավերժացնող սոցիալական նորմերին, քանի որ այդ պատկերացումների պատճառով է, որ հոմոֆոբիան, բիֆոբիան, ինտերֆոբիան և տրանսֆոբիան այդքան խորապես արմատացած են մեր հասարակությունում:

Ըստ Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով (հոդված 1) և յուրաքանչյուր մարդ պետք է ունենա սույն փաստաթղթում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատություններն առանց որևէ տարբերության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից (հոդված 2): Անկախ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային օրենքով սահմանված այս իրավահավասարությանը՝ Հայաստանում Տրանս և ԼԳԲԻՔ անձինք դեռևս շարունակում են բախվել խտրականության, ճնշման և բռնության իրենց կյանքի տարբեր ոլորտներում, ինչի վկայությունն էին ֆիզիկական բռնության և ատելության կոչերի բազմաթիվ դեպքերը վերջին տարիներին: Հասարակության կողմից չընդունվածությունը և պետական համակարգի, մասնավորապես ոստիկանության կողմից անգործությունը հաճախ Տրանս և ԼԳԲԻՔ անձանց անպաշտպան, անօթևան է դարձնում և որոշ դեպքերում անգամ ստիպում փախչել երկրից:

Ցավոք, ՀՀ կառավարությունը անհրաժեշտ ուշադրություն չի դարձնում այս հրատապ խնդիրների լուծմանը, խտրականության դեմ պայքարի քաղաքականությունը անարդյունավետ է, իսկ Տրանս և ԼԳԲԻՔ անձանց մարտահրավերները մարգինալացված, ինչը հանգեցնում է համայնքի ներկայացուցիչների կողմից պետության նկատմամբ վստահության բացակայության:

Զանգվածային լրատվության միջոցներով ևս Տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ խտրականությունը և բռնությունը չի լուսաբանվում, իսկ թեմային անդրադարձ կատարվում է միայն ներքաղաքական շահարկումների, խտրականության ամրապնդման և ատելության խոսքի տարածման շրջանակներում:

Կարևոր է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ատելության հողի վրա գենդերային հիմքով հանցագործություններին, խտրականությունից պաշտպանված լինելուն, գենդերի իրավական ճանաչմանը, սեռափոխության վիրահատությանը և հորմոնաթերապիային առընչվող իրավական ակտերի բացակայության պատճառով՝ սահմանափակվում են տրանսգենդեր անձանց հիմնարար ազատությունները, ինչպիսիք են ազատ տեղաշարժի իրավունքը, կրթություն ստանալու իրավունքը, ընտանիք կազմելու իրավունքը և այլն: Այս հիմնախնդիրները մեկուսացնում են տրանսգենդեր անձանց հասարակությունից, տրանսգենդեր անձիք շատ դեպքերում վարում են փակ կյանք, ենթարկվում ծաղրանքի և ատելության:

Իրավունքի Կողմ ՀԿ-ի առաջնահերթություններից է Տրանս և ԼԳԲԻՔ անձանց տեսանելիության բարձրացումը,ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության դեպքերը արձանագրումը և այդ խնդիրները ներպետական և միջազգային հարթակներում ներկայացնելը: Հիմնադրումից ի վեր՝ Իրավունքի Կողմ ՀԿ-ի կողմից ՀՀ պետական մարմինների հետ Տրանս և ԼԳԲԻՔ անձանց իրավունքների պաշտպանությանն ուղված աշխատանքների հիման վրա վերջին տարիներին գրանցել ենք հետևյալ առաջխաղացումները՝

Քաղաքացիական Կացության Ակտերի Գրանցման գործակալությանը (ՔԿԱԳ) հետ փոխհամագործակցության արդյունքում հեշտացվել է տրանսգենդեր անձանց անվանափոխության գործընթացը, ինչը այժմ հնարավոր է կատարել առանց նախկինում պարտադիր համարվող անվանափոխվող անձի տրանսգենդեր լինելը փաստող 3 անձանց վկայության և պարտադիր հոգեբանական եզրակացության:
2018 թ.-ին Իրավունքի Կողմ ՀԿ-ի իրավաբանական թիմի ջանքերով առաջին անգամ Դատարանի կողմից ճանաչվել է սեռական կողմնորոշման և (կամ) գենդերային ինքնությամբ պայմանավորված խտրականության հիմքով իրավունքների խախտումը:
2022 թ.-ին Իրավունքի Կողմ ՀԿ-ն հիմնել է Տրանս ԼԳԲԻՔ համայնքային ապահով կենտրոն, որտեղ արդեն հարյուրավոր ԼԳԲՏԻՔ անձինք, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները ստացել են իրավական և հոգեբանական խորհրդատվություն և աջակցություն, մասնակցել տարատեսակ կրթական, ժամանցային հանդիպումների և քննարկումների, օգտվել համակարգչային և օտար լեզվի դասընթացներին մասնակցելու հնարավորությունից:

Այս տարի, ի նշան IDAHOBIT-ի, Իրավունքի Կողմ ՀԿ-ն, ի թիվս այլ միջոցառումների, իրականացրել է նաև սոցիալական հարցում Երևանում, որի նպատակն էր բացահայտել հասարակության վերաբերմունքը ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ և ստացած պատասխանները փաստում են, որ Հայաստանը դեռևս մեծ է խտրականությունը ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ: Այս վիճակագրությունը մտահոգիչ է և ամրապնդում է իրազեկվածության ու իրավունքների պաշտպանության ուղղությամբ աշխատանքների հրատապությունը: Իրավունքի Կողմ ՀԿ-ն հավատարիմ է մնում խտրականությանը վերջ դնելու և բարեփոխումներին աջակցելու իր քաղաքականությանը՝ հանուն խտրականությունից և բռնությունից զերծ աշխարհի, որտեղ յուրաքանչյուր անհատի կստանա արժանապատիվ և հարգալից վերաբերմունք՝ անկախ գենդերային ինքնությունից, սեռական կողմնորոշվածությունից և գենդերային ինքնաարտահայտումից:

IDAHOBIT
2023

IDAHOBIT 2023

Նշելով հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը Հայաստանում՝ կոչ ենք անում՝

Պետական մարմիններին՝

– իրականացնել համապատասխան իրավական քայլեր ապահովելու տրասնգենդեր անձանց իրավական գենդերի ճանաչումը և անվանափոխությունը ՝ հիմնվելով ինքնորոշման իրավունքի, հոգևոր և ֆիզիկական անձեռնմխելիության վրա՝ վերացնելով հարկադրական բժշկական միջամտությունների պահանջը:

– թարմացնել իրավահավասարության մասին օրենքի նախագիծը՝ ներառելով խտրականության արգելքը ՝ պայամանավորված գենդերային ինքնությամբ և գենդերային ինքնարտահայտմամբ:

– օրենքով ապահովել ատելության հիմքով հանցագործություններից և ատելության խոսքից տրանսգենդեր անձանց պաշտպանվածությունը, վարել միջադեպերի փաստագրումը և ինչպես ԵԱՀԿ մասնակից այլ երկրներ ներկայացնել հաշվետվություններ:

– ՀՀ կրթական համակարգում գործող ընթացիկ ուսումնական ծրագրերը տրանսգենդեր անձանց իրավունքների տեսանկյունից դարձնել ներառական և ուսուցանել ներառականություն, սեռականություն և գենդերային հիմնահարցեր:

– իրականցնել համապատասխան միջոցառումներ՝ տրանսգենդեր անձանց նկատմամբ կատարված բռնության, ատելության և խտրականության բոլոր դեպքերը արդարացիորեն ուսումնասիրելու համար:

– դադարեցնել ատելության, խտրականության եւ ծաղրանքի խրախուսանքը տրանսգենդեր անձանց հանդեպ՝ ԼԳԲՏ խնդիրների քաղաքականացման միջոցով:

ՀՀ ոստիականությանը՝

– ՀՀ ոստիկանությանը, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին և պատկան մարմիններին ապահովել Տրանս ԼԳԲԻՔ անձանց անվտանգությունը և ՀՀ սահմանադրությամբ նրանց տրված բոլոր իրավունքները:

ՁԼՄ-ներին՝

– խուսափել սխալ և ապակողմնորոշող տերմինաբանության կիրառումից և դադարեցնել խտրականության քարոզը տրանսգենդեր մարդկանց հանդեպ:

– տրանսգենդեր անձանց վերաբերող հարցերը լուսաբանել ներառականության և զգայունության սկզբունքներից ելնելով:

– դադարել սնել թյուր նախապաշարմունքները և կարծրատիպերը տրասնգենդեր անձանց մասին՝ ներկայացնելով նրանց որպես հիվանդ մարդկանց, ովքեր ցանկանում են ոչնչացնել հայկական ավանդույթները եւ մշակույթը:

– հարգել տրանսգենդեր անձանց անձնական կյանքը և համագործակցել տրանսգենդեր անձանց հետ՝ նրանց մասին լրատվական նյութեր պատրաստել ցանկանալիս:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ԾՐԱԳՐԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է IDAHOT+ ՖՈՐՈՒՄԻՆ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ծրագրերի ղեկավարը սույն թվականի մայիսի 11-ին Ռեյկյավիկում մասնակցել է IDAHOT+ ֆորումին, որի նպատակն էր խթանել ԼԳԲՏԻ+ անձանց իրավունքները և ամրապնդել համագործակցությունը շահագրգիռ կողմերի միջև: Ֆորումը իրականացվել է Եվրոպայի խորհրդի աջակցությամբ.այն հարթակ է ծառայել եվրոպական երկրների կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության խմբերի և հիմնական շահագրգիռ կողմերի համար՝ ԼԳԲՏԻ+ անձանց իրավունքների առաջընթացը գնահատելու, ձեռքբերումները տոնելու և ԼԳԲՏԻ+ իրավունքների պաշտպանության համար նոր նպատակներ սահմանելու համար: Որպես Հայաստանում և Հարավային Կովկասում առաջին և առաջատար Տրանս, ԼԳԲԻՔ և սեքս աշխատողների համայնքահեն կազմակերպություն՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն ևս մասնակցում էր IDAHOT+ ֆորումին:

«Իրավունքի կողմ» ՀԿ-ի ծրագրերի ղեկավարը ելույթ ունենցավ ֆորումի «Աջակցություն սպառնալիքի տակ գտնվող ԼԳԲՏԻ+ անձանց իրավունքների պաշտպաններին» հատվածում, որը կենտրոնացած էր խտրականության բարձր մակարդակ ունեցող երկրներում աշխատող և ակտիվիստական գործունեություն ծավալող ԼԳԲՏԻ+ իրավապաշտպանների առջև ծառացած մարտահրավերների վրա: Նա ելույթի ընթացքում ներկայացրեց ԼԳԲՏԻ+ անձանց իրավիճակը Հայաստանում՝ նշելով առկա օրենսդրական բացերի և կազմակերպության կողմից իրականացված աշխատանքների մասին: Քննարկման ընթացքում առանձնացվեց նաև միջազգային կազմակերպությունների կողմից անհրաժեշտ աջակցության մասին, որը կապահովի ԼԳԲՏԻ+ իրավապաշտպանների անվտանգությունն ու բարեկեցությունը: «Իրավունքի կողմ» ՀԿ-ն կարևորում է IDAHOT+ ֆուրումին մասնակցությունը և փորձի փոխանակումը գործընկեր կազմակերպությունների հետ, ինչը նպաստում է ԼԳԲՏԻՔ անձանց կյանքի որակի բարելավմանը և իրավունքների պաշտպանվածությանը ՀՀ-ում:

IDAHOT+ ֆորումի ամբողջական տեսագրությունը կարող եք դիտել այստեղ՝

Իրավունքի կողմ հկ-ի ծրագրերի ղեկավարը մասնակցել է

IDAHOT+ FORUM 2023

Ռեյկյավիկ • Իսլանդիա



Սույն տեսանյութը ներկայացնում է հարցազրույցների շարք Հայաստանում ԼԳԲՏԻՔ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների (Լիլիթ Մարտիրոսյան - «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ, Լարա Ահարոնյան - «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ, Նինա Կարապետյանց - «Հելսինկյան ասոցիացիա» ՀԿ, Անուշ Գաբրիելյան - «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ, Գոհար Շահնազարյան - Հայաստանում կանանց հիմնադրամ) հետ՝ նվիրված հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան (**#IDAHOBIT**-ին), ինչպես նաև ներառում է Երևանում իրականացված սոցիալական հարցում՝ ԼԳԲՏԻՔ անձանց վերաբերյալ հասարակության վերաբերմունքը պարզելու նպատակով:
Տեսանյութը նկարահանվել է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:
Սույնի բովանդակությունը և արտահայտված տեսակետները պատկանում են «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը և կարող են չհամընկնել Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության տեսակետների հետ:

© Սույն տեսահոլովակի հեղինակային իրավունքները պաշտպանված են և պատկանում են «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը:



ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԿԱՐԵՎՈՐՈՒՄ Է

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՇԱՎ-Ի ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐ

Անցած երեք տարիների ընթացքում Human Rights Campaign-ը իր ուշադրության կենտրոնում է պահել ամբողջ աշխարհում ԼԳԲՏՔ+ համայնքի նկատմամբ շարունակվող բռնությունը և խտրականությունը: Կազմակերպությունը տարիներ շարունակ տրամադրում է փոքր դրամաշնորհներ աշխարհում ԼԳԲՏԻՔ կազամկերպություններին, որի շրջանակներում այս տարի Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ն կազմակերպել էր դասընթաց ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստների համար՝ «Պաշտպանում ենք մեր իրավունքները» թեմայով: Մասնակիցները ձեռք են բերել մարդու իրավունքների պաշտպանության և ռազմավարական հաղորդակցման հմտություններ, որոնք կօգտագործեն տարբեր համայնքներում գործունեություն ծավալելու համար:

@Human Rights Campaign

HUMAN RIGHTS CAMPAIGN

Տրանս իրավունքների քարտեզ

Եվրոպա և կենտրոնական ասիա 2023



Co-funded by the European Union

Downloaded from transrightsmap.tgeu.org on 5/26/2023

Տրանսգենդեր Եվրոպան հրապարակել է 2023թ.-ի տրանս իրավունքների քարտեզը և ինդեքսը: Այն Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում տրանս իրավունքների համապարփակ վերլուծություն է, որը արդեն մեկ տասնամյակ տվյալներ է հավաքագրում տրանս անձանց նկատմամբ կիրառվող իրավական և քաղաքական գործընթացների վերաբերյալ:

ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Հունիսի 2-ին՝ Սեքս աշխատողների միջազգային օրվան ընդառաջ, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը Կարմիր Հովանոց հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ հայտարարում է ենթադրամաշնորհային ծրագիր Երևանից և ՀՀ բոլոր մարզերից սեքս աշխատող անհատների, ակտիվիստների, համայնքի ներկայացուցիչների խմբերի և սեքս աշխատող անձանց խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների համար:

Ենթադրամաշնորհային նախագծերը պետք է ունենան նպատակային ուղղվածություն և ծառայեն Հայաստանում սեքս աշխատողների սոցիալական ներառականության (քաղաքացիական ակտիվություն, սեքս աշխատող երիտասարդների և համայնքի ներկայացուցիչների հզորացում և այլն): Նախատեսվող նախագծի բյուջեն չպետք է գերազանցի 500 եվրոն (202,490 դրամը)՝ հարկերը ներառյալ: Առաջնահերթություն կտրվի սեքս աշխատողների խնդիրների տեսանելիությունը բարձրացնող, համայնքի նկատմամբ խարանը և խտրականությունը նվազեցնող և ճշգրիտ տեղեկատվություն տրամադրող նախաձեռնություններին: Նախագծերը կարող են ունենալ ստեղծարար բովանդակություն, օրինակ հոլովակների, պողքասթերի նկարահանում, լուսանկարների ցուցադրություն, ինչպես նաև սեքս աշխատողների սոցիալական ներառականությանը նպաստող հանդիպումներ, քննարկումներ և այլն:

Դիմելու համար անհրաժեշտ է լրացնել կից հայտը

Մրցույթին դիմելու վերջնաժամկետը հուլիսի 15-ն է: «Իրավունքի կողմ» ՀԿ-ն հայտերը ուսումնասիրելու համար ձևավորելու է մրցութային հանձնաժողով, որը կգնահատի դիմորդների ներկայացրած նախագծերը՝ ըստ նախատեսվող գործողությունների իրագործելիության, կարիքների գնահատման, ծախսերի արդյունավետության, նախագծի նկարագրության հստակության և մրցույթի նպատակներին համապատասխանելիության: Մրցութային հանձնաժողովը արդյունքների մասին դիմորդներին կտեղեկացնի օգոստոսի 1-ին:

Հարցերի կամ հավելյալ տեղեկությունների համար կապ հաստատեք մեզ հետ՝

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ

Մայիսի 31,2023

Ժողովրդավարության ու մարդու իրավունքների պաշպանությանը ազգային անվտանգության մարտահրավերների պայմաններում

Freedom House

UNION OF INFORMED CITIZENS

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ

Այսօր՝ մայիսի 31-ին, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն և Ֆրիդրմ Հաուս միջազգային կազմակերպությունը համատեղ կազմակերպել էին Ժողովրդավարության Հայկական Ֆորումը, որը այս տարի անցկացվում էր «Ժողովրդավարության ու մարդու իրավունքների պաշտպանությունը՝ ազգային անվտանգության մարտահրավերների առկայության պայմաններում» խորագրի ներքո: Այն նպատակ ուներ միավորելու քաղհասարակության, ՀՀ պետական մարմինների, ՁԼՄ ներկայացուցիչների, դիվանագիտական և փորձագիտական համայնքի շահագրգիռ կողմերին՝ համատեղ վերլուծելու և քննարկելու Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների առջև ծառացած հրատապ խնդիրները՝անվտանգային ներկայիս մարտահրավերների առկայության պայմաններում: Ֆորումին հրավիրված էր նաև «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը:
Ներկաներին բացման խոսքով ողջունեցին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը և Ֆրիդրմ Հաուսի Եվրոպայի և Եվրասիայի ծրագրերի տնօրեն Մարկ Բեհրենդտը: Ֆորումի՝ «Անվտանգության բարդ միջավայրում մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» պանելային քննարկման ժամանակ ելույթ ունեցավ Ֆրիդրմ Հաուսի Եվրոպայի և Եվրասիայի ծրագրերի տնօրեն Մարկ Բեհրենդտը, ով, խոսելով Հայաստանում առկա տարբեր մարտահրավերների մասին, անդրադարձավ նաև «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի իրավական զեկույցում փաստագրված տրանսգենդեր անձանց նկատմամբ բռնության դեպքերին:

«Իրավունքի կողմ» ՀԿ-ն կարևորում է Ժողովրդավարության Հայկական Ֆորումի կազմակերպումը, որտեղ, ի թիվս այլ մարտահրավերների, բարձրաձայնվում են «Իրավունքի կողմ» ՀԿ-ի շահառուների հիմնախնդիրները և քննարկվում են հետագա քայլերը, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրների լուծման համար: Տրանս և ԼԳԲԻՔ անձանց աջակցելը Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության ամրապնդման և իրավական հավասարության հաստատման անբաժանելի մասն է: «Իրավունքի կողմ» ՀԿ- հետևողականորեն շարունակելու է փաստագրել բռնության և խտրականության դեպքերը և բարձրաձայնել դրանց մասին ներպետական և միջազգային հարթակներում, որպեսզի յուրաքանչյուր անհատ ստանա արժանապատիվ և հարգալից վերաբերմունք՝ անկախ սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

©Copyright All Rights Reserved For Right Side Ngo.